# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01/21

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 09 մարտի 2020թ.

2021 թվականի մարտի 09-ին, ժամը 16:00-ին Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված սոցիալական, առողջապահության, բնության պահպանության հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2020 թվականի կատարողականը հաստատելու մասին, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետեության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 117 բնակարանը Շողակաթ Վանիկի Հարոյանին անհատույց օտարելու մասին, Հայաստանի Հանրապետեության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 07–Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշումների նախագծերի մասին:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդևանյանը, անդամներ Ավետիք Ասոյանը, Արգամ Շառյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Միշա Եղիազարյանը, աշխատակազմի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը և Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ Զինավոր Սարգսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը

1.«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2020 թվականի կատարողականը հաստատելու մասին,

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 117 բնակարանը Շողակաթ Վանիկի Հարոյանին անհատույց օտարելու մասին,

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 07–Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին :

Օրակարգի առաջին՝ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2020 թվականի կատարողականը հաստատելու մասին, հարցի շուրջ Լիդիա Պողոսյանը ներկայացրեց, որ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենը 2021 թվականի մարտի 01-ին և 04-ին համայնքի ղեկավարին N 58 և N 65 գրություններով ներկայացրել է պոլիկլինիկայի 2021 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2020 թվականի կատարողականը՝ ավագանու հաստատմանը ներկայացրելու համար:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի և 84-րդ հոդվածի 1-ին մասի «իգ» կետի՝ ավագանին Հաստատում է «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2020 թվականի կատարողականը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ֆինանսական գործունեության նախահաշվիվը և դրա 2020 թվականի կատարողականը հաստատելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ – 3 Դեմ - 0

Օրակարգի հաջորդ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 117 բնակարանը Շողակաթ Վանիկի Հարոյանին անհատույց օտարելու մասին, հարցի շուրջ հանդես եկավ համայնքի ղեկավարի խորհրդական Միշա Եղիազարյանը: Նա ներկայացրեց համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի

տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման հարցերով զբաղվող հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքները և առաջարկությունը՝ Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարանի 147 սենյակի (ներկայիս՝ Օղակաձև փողոց 50 շենքի 117 բնակարան) բնակիչ Շողակաթ Վանիկի Հարոյանի 2021 թվականի փետրվարի 11-ի դիմումի հիման վրա Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 117 բնակարանը Շողակաթ Վանիկի Հարոյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

**Որոշվեց՝**

Հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 117 բնակարանը Շողակաթ Վանիկի Հարոյանին անհատույց օտարելու մասին»*** որոշման նախագծին և հարցը ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ – 3 Դեմ – 0

Օրակարգի երրորդ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 07–Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին, հարցի կապակցությամբ հանդես եկավ Լիլիթ Ավուշյանը՝ նշելով, որ համաձայն համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 08-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգի» IV բաժնի 26-րդ կետի՝ եթե տվյալ ԽՄ-ի անդամ հանդիսացող ավագանու ներկայացուցիչը կամ համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպության ներկայացուցիչը դադարեցնում է գործունեությունն իր պաշտոնում, նա կարող է շարունակել անդամակցել ԽՄ-ին:

Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնի կազմում ընդգրկված Հայկ Եղյանը 2020 թվականի փետրվարի 24-ից ազատվել է Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից և այժմ զբաղեցնում է Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը:

Ելնելով վերոգրյալից և համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 08-Ն որոշմամբ ընդունված կարգը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Որոշվեց**

հավանություն տալ ***«Հայաստանի Հանապետության Կուրայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 07–Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ – 3 Դեմ - 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ Հայկ Վարդևանյան

Ավետիք Ասոյան

Արգամ Շառոյան